ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն ---------------------------------

«01» ---09---------------2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

VIII^գ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Ղուկասյան Անժելա Մամիկոնի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022- 2023» ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է 26 աշակերտից՝ 15 աղջիկ, 11 տղա: Դասարանի ավագն է Առաքելյան Մարինան: Դասարանում կա 4 գերազանցիկ և 7 հարվածային: Դասարանում չկան դժվար դաստիարակվող և չհարմարվող երեխաներ: Դասարանում տիրում է բարոյահոգեբանական հանգիստ մթնոլորտ, երեխաները ուշադիր են միմյանց նկատմամբ: Ուսուցիչները հաճույքով են աշխատում 8գ դասարանում:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

Կազմակերպել էքսկուրսիաներ մշակութային կետրոններ, խորհուրդ տալ շատ կարդալ, լսել դասական երաժշտություն, լինել բարեկիրթ, օգտագործել որևէ երաժշտական գործիք, կարևորել հայ առաքելական եկեղեցու դերն ու նշանակությունը:

Այցելություն Սուրբ խաչ եկեղեցի և Հակոբ Պարոնյանի անվան թատրոն:

Գեղագիտական դաստիարակություն- *Խնդիրները՝*

Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում:

Բացատրել գեղեցիկի դերն ու նշանակությունը մեր կյանքում, դիտել ֆիլմեր, հաճախել թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ: Հետաքրքրվել արդյոք երեխաները հաճախում են գեղագիտական խմբակներ:

Կինոդիտում, այցելություն պետական պատկերասրահ:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ:

Կարևորել հայրենասիրությունը և հանուն հայրենիքի լավ գործոր անելը: Կրթությունը դիտարկել որպես հայրենասիրության դրսևորում:

Այցելություն եռաբլուր և փառքի թանգարան:

Ֆիզիկական դաստիարակություն *Խնդիրները՝*

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:

Առաջնորդվել առողջ մարմնում առողջ հոգի կարգախոսով: Կարևորել ֆիզիկական ակտիվությունը և մասնակցությունը ֆիզկուլտուրայի դասերին:
Մասնակցել արշավների, մարաթոնների և սպորտլանդիաների:

Աշխատանքային դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:

Ձևավորել սեր դեպի աշխատանքը և հարգանք աշխատող մարդու նկատմամբ: Դասղեկի ժամերին զրուցել

մասնագիտություններ թեմայով:

Հրավիրել հետաքրքրիր մասագիտություններ ունեցող հյուրերի և կազմակերպել զրույցներ: Այցելել գործարաններ:

Բնապահպանական դաստիարակություն Խնդիրները՝

Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում

Կազմակերպել էքսկուրսիաներ բնության գրկում, հավաքել դեղաբույսեր, կազմակերպել ծառատունկ, ջրել դպրոցի շրջակայքի ծառերը: Սերմանել հոգատար վերաբերմունք բնության հանդեպ: «Մոլորակը մեր բոլորիս տունն» է խորագրով զրույցներ վարել:

Դպրոց-ընտանիք կապը Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի ավելի լավ սովորեն:

Ընտանիքը պետության հիմքն է: Լավ ընտանիքում մեծանում են լավ երեխաներ: Չկորցնել կապը ծնողների հետ: Մշտապես տեղյակ պահել ծնողին իր երեխայի մասին և թերություններ նկատելու դեպքում դրանք համատեղ շտկել:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
հինգշաբթի	8-րդ	հինգշաբթի	8-րդ

Ուսումնակա ն շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	Ծանոթություն, կարողությունների և հմտությունների թերթիկի լրացում	8.09.22	
II	Զրույց «Աշակերտի իրավունքներն ու պարտականությունները» թեմայով	15.09.22	
III	Զրույց «Պետական խորհրդանիշեր» թեմայով	22.09.22	
IV	Զրույց «Էկոլոգիական խնդիրներ» թեմայով	29.09.22	
V	Զրույց «Երևանի գեղեցիկ աշունը» թեմայով	06.10.22	
VI	Զրույց «Թրաֆիքինգը» թեմայով	13.10.22	
VII	Զրույց «Հանդուրժողականությունը որպես դրական վերաբերմունք» թեմայով	20.10.22	
VIII	Զրույց առաջադիմության, գնահատականների և ուսումնական հարցերի վերաբերյալ	03.11.22	
IX	Զրույց «Երևանն իմ քաղաքն է» թեմայով	10.11.22	
X	Զրույց «Ինչ մասնագիտություն եմ ուզում ընտրել» թեմայով	17.11.22	
XI	Զրույց «Կրթությունը որպես բարեկեցիկ ապրելու միջոց» թեմայով	24.11.22	
XII	Զրույց «Ինչ եմ ես անում և էլ ինչ կարող եմ անել» թեմայով	1.12.22	
XIII	Զրույց «Բնության արհավիրքները» թեմայով	8.12.22	
XIV	Զրույց «Տարեվերջյան ամփոփում» թեմայով	15.12.22	
XV	«Ամանորյա մտորումներ»	22.12.22	
XVI	Զրույց «Ինչպես անցկացրի նոր տարին և սուրբ ծնունդը» թեմայով	12.01.23	
XVII	Զրույց հանդուրժողականության մասին թեմայով	19.01.23	
XVIII	Զրույց «Իմ փառապանծ հզոր բանակ» թեմայով	26.01.23	
XIX	Զրույց «Ընկերասիրություն» թեմայով	02.02.23	
XX	Զրույց «Անձնական հիգիենան առողջության գրավական» թեմայով	9.02.23	
XXI	Զրույց «Տիարն Ընդառաջ»–ի թեմայով	16.02.23	

XXII	Զրույց «Թումանյանը և գիրք նվիրելու խորհուրդը» թեմայով	23.02.23	
XXIII	Զրույց «Գարուն է գալիս» թեմայով	02.03.23	
XXIV	Զրույց «Մայրության և գեղեցկության տոնը» թեմայով	09.03.23	
XXV	Զրույց առաջադիմության, ընթացիկ գնահատականների մասին	16.03.23	
XXVI	Զրույց վարքի և կարգապահական կանոնների մասին	23.03.23	
XXVII	Զրույց մայրության տոնի և եկեղեցական տոների վերաբերյալ	06.03.23	
XXVIII	Զրույց «Երթևեկության կանոնները» թեմայով	13.04.23	
XXIX	Զրույց ցեղասպանության և հայոց պատմության մասին	20.04.23	
XXX	Զրույց «Հագնվելու կուլտուրան և բրենդամոլությունը» թեմայով	27.04.23	
XXXI	Զրույց «Սպարթ հեռախոսների օգտագործման դրական և բացասական կողմերը» թեմայով	04.05.23	
XXXII	Զրույց «Մեր հաղթանակները և պարտությունները» թեմայով	11.05.23	
XXXIII	Զրույց կիսամյակային գնահատականների և ամփոփիչ տվյալների մասին	18.05.23	
XXXIV	Գրքերի հավաքում, էքսկուրսիայի կազմակերպում	25.05.23	